ՀԵՐՄԱՆ ՀԵՍՍԵԻ ԱՐՁԱԿԻ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

ԱՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հերման Հեսսեն (1877-1962) ստեղծագործական երկար կյանքի ընթացքում անցել է հասունացման շրջաններ[1]: Թեև նամակներից մեկում խոստովանում է, որ ինքը որևէ ուսմունքի հետևորդ չէ, այլ՝ որոնումների և կայացման մարդ, այդուհանդերձ կայուն արժեքներ նրա կյանքում եղել են: Գրողը խոստովանել է, որ այդ արժեքներն են նրա հայրական տան ***քրիստոնեական և ազգայնականությունից գրեթե ամբողջությամբ զերծ ոգին, մեծ չինացիները և պատմաբան Յակով Բուրկհարդտը***[2]:

Հեսսեի փիլիսոփայական վեպերին բնորոշ ժանրային ընդհանրական գծերի հետ մեկտեղ (պայմանական միջավայր, փիլիսոփայական գաղափար և դիալեկտիկական հերոս)[3], հատուկ են նաև այնպիսի որակներ, որոնք կազմում են նրա գեղագիտության և աշխարհայացքի հիմքը:

1. Նախ, ինչպես գրական մեծարժեք ստեղծագործությունները, Հեսսեի վեպերը ևս ունեն կարևոր մի հատկանիշ: Նրանք ***եռադեմ են՝ միտված անցյալին, ներկային և ապագային:*** Բնականաբար, լինելով 20-րդ դարի իրողությունների արտահայտություն, իրենց ներքին և արտաքին գծերով գլխավորապես կապված են արդիականության հետ, բայց առանց ապագայի և անցյալի միտվածության հաշվառման նրանց գեղագիտական և աշխարհայացքային ամբողջականությունն անկասկած խախտվում է: Տվյալ դեպքում անցյալին միտվածություն ասելով պետք է հասկանալ Հեսսեի վեպերում առկա մշակութային այն շերտը, որն առնչություններ ունի գերմանական միջնադարի, 17-րդ դարի միս-

---

[1] Հետաքրքիր դիտարկում է կատարում Ս. Ավերինցևը: Համեմատելով գրողի տարբեր տարիների լուսանկարները՝ եզրակացնում է, որ նրա դեմքը վերջնականորեն ձևավորվում է ուշ տարիքում: «Հեսսեն պատկանում է այն մարդկանց թվին,- գրում է նա,- ովքեր յոթանասուն տարեկանում ավելի գեղեցիկ են, քան երեսուն կամ քսան» (**Аверинцев С**. Герман Гессе, в кн: Hermann Hesse. Die Morgenland fahrt. Gedichte. Märchen. Kleine Prosa. Moskau, Progress, 1981, S. 367): Այս դատողությունը կարող ենք տարածել նաև նրա գրական ժառանգության վրա, եթե նկատի ունենանք գրողի ստեղծագործական հասունացումը՝ վաղ շրջանի ոչ այնքան աչքի ընկնող վեպերից մինչև «Հուլունքախաղը», երբ կոմպոզիցիոն-հորինվածքային բոլոր տարրերը հասնում են կատարելության:

[2] Տե՛ս **Гессе Г**. Письма по кругу. М., 1987, էջ 277-278:

[3] Հերման Հեսսեի վեպերի պայմանական միջավայրի, փիլիսոփայական գաղափարների և դիալեկտիկական հերոսի մասին մանրամասն տե՛ս **Каралашвили Р**. Мир романа Германа Гессе. Тбилиси, 1984:

տիկայի, 18-րդ դարի լուսավորական և, վերջապես, ռոմանտիկական մեծ գրականության հետ: Ապագային միտվածությունը ենթադրում է նաև ուտոպիականություն, ինչը նույնպես շատ բնորոշ է Հեսսեի մտածողությանը: Երբ համեմատում ենք Հեսսեին և Կաֆկային, ապա պարզ է դառնում, որ մտածողության առումով և գրական ճանապարհի սկզբնական հատվածում նրանք ինչ-որ չափով նման են իրար: Երկուսն էլ խոսում են այն փակուղիների մասին, որոնցում հայտնվել է 20-րդ դարի մարդը: Բայց եթե Կաֆկայի համար փակուղիները մնում են փակ, ապա Հեսսեն փորձում է բացել դրանք: Գրականագետ Կ. Հորստը, խոսելով 20-րդ դարասկզբի եվրոպական վեպի մասին, մի դատողություն է անում, որը տվյալ դեպքում պատշաճում է ինչպես Կաֆկային, այնպես էլ Հեսսեին: Քանի որ, նշում է Հորստը, փոփոխված իրադրության պայմաններում իրականությունը դուրս է գալիս վերահսկողությունից և բացակայում է որևէ կարգ, որ վստահություն սահմանի գրողի և ընթերցողի միջև, ուստի վիպասանին մնում է երկու տարբերակ՝ կա՛մ ներկայացնել քաոսը (ինչն անում է Կաֆկան), կա՛մ ուտոպիայի միջոցով իրականության մեջ ստեղծել կարգավորվածություն[4]: Հեսսեի բոլոր մեծ վեպերը՝ իբրև փիլիսոփայական գործեր, նաև ուտոպիական են: Ուտոպիան առկա է հատկապես «Հուլունքախաղ» վեպում[5]: Այսինքն, Հեսսեի համար կարևոր է ոչ այնքան մերկ ճշմարտությունը կյանքի մասին, այլ նրա հեռանկարը: Այս հանգամանքը Հեսսեի վեպերում պայմանավորում է կարևոր մի մոտիվի մշտական առկայություն, այն է՝ ուսուցչի և աշակերտի: Այս միֆոլոգեմը ուտոպիականության հետ միասին գրեթե մշտապես հանդիպում է Հեսսեի մոտ՝ դառնալով հեսսեագիտության էական ուղղություններից մեկը[6]: Ուսուցչի և աշակերտի միասնական կերպարն առհասարակ բնորոշ է գերմանական փիլիսոփայական վեպին: Դա ակնհայտ իրողություն է «Տափաստանի գայլը», «Սիթհարտա» և հատկապես «Հուլունքախաղ» վեպերում: Քանի որ «Հուլունքախաղը» նաև ոգու պատմություն է, ուստի այն ենթադրում է ուսուցչի և աշակերտի առկայություն, ինչն անխուսափելի է ոգու նպատակների և փոխանցելիության ապահովման համար: Ոգու տեսանկյունից, ըստ Հեսսեի, ուսուցիչ և աշակերտ հարաբերությունը այլ բան չէ, քան շնորհի փոխանցումը մեկից (ուսուցչից) մյուսին (աշակերտին): Ըստ երևույթին նրանք երկուսն էլ նույն էության երկու տարբեր հասակներն են: Թեև վեպի հերոս Յոզեֆ Կնեխտը սովորում է տարբեր ուսուցիչներից (Թոմաս ֆոն դեր Տրավե, հայր

---

[4] Տե՛ս **Horst K**. Die deutsche Literatur der Gegenwart. München, Nymphenburger Verlagshandlung, 1957, էջ 28-29:

[5] Այդ մասին առավել մանրամասն տե՛ս **Ա. Առաքելյան**, Հերման Հեսսեի «Հուլունքախաղ» վեպն իբրև գերմանական ուտոպիա, «Գրականագիտական հանդես», Եր., 2011, էջ 226-244:

[6] Այդ կապակցությամբ տե՛ս, օրինակ՝ **Röttger J**. Die Gestalt des Weisen bei Hermann Hesse, Bonn, 1980:

Յակոբուս, Ավագ եղբայր (չինացի) և ուրիշներ), սակայն ոգու իրացման տեսանկյունից ամենալուսավորը երաժշտության վարպետ – Կնեխտ մտերմությունն է, որը չափազանց նման է Ֆ. Դոստոևսկու «Կարամազով եղբայրների» հայր Զոսիմա-Ալյոշա Կարամազով մտերմությանը: Եթե վերջիններիս բնորոշ է առավելապես հավատն ու քրիստոնեական սերը, ապա երաժշտության վարպետը և Յոզեֆ Կնեխտը մարմնավորում են իմացությունը: Նրանց բոլորին էլ, իբրև ընդհանրական բնավորություն, հատուկ է զվարթությունը (Heiterkeit, веселость):

2. Հերման Հեսսեի փիլիսոփայական վեպերում կարևորագույն տեղ է զբաղեցնում ***հոգու պրոբլեմը***: «Հեսսեին մշտապես հետաքրքրում է գաղափարների աշխարհը, գաղափարների կյանքը, հոգու, ոչ թե նյութի գոյությունը»[7],- գրում է Ա. Բերեզինան: Կարելի է ասել, որ Հեսսեի ամենամեծ թեման հոգին է, գերմանական, այսպես կոչված, հոգեկանությունը (Innerlichkeit): Հեսսեի փիլիսոփայական վեպերում բոլոր ճանապարհները տանում են այս խնդրի մեկնաբանությանը: Ինքը՝ Հեսսեն, իր ստեղծագործությունների ծնունդը պայմանավորում է անձի (ոչ հասարակության) պաշտպանության անհրաժեշտությամբ: Գրականագետ Ռեզո Կարալաշվիլին Հեսսեի վեպերն անվանում է «հոգու կենսագրություններ»: Բոլորովին պատահական չէ Հեսսեի գրական ժառանգության մեջ «Ճանապարհ դեպի ներս» ծրագրային պատմվածքի առկայությունը, որը թեև փոքրածավալ, բայց առանցքային գործ է: Ոգու, հոգու և մարմնի կենտրոնացման շնորհիվ, ինչը տեսնում ենք պատմվածքում, կարելի է հասնել դրանց միավորմանը և Համընդհանուր սուբստանցին: Այս գաղափարը, որ ուղղակի արտահայտությունն է Հեսսեի երիտասարդական հետաքրքրություններից մեկի՝ մոնիստական փիլիսոփայության, գեղարվեստական բարձր արտացոլման է հասնում «Սիթհարտա» և «Հուլունքախաղ» վեպերում, որտեղ հերոսները տառացիորեն տարրալուծվում են բնության կամ Համընդհանուր սուբստանցի մեջ: Հեսսեն անհատի և աշխարհի հավերժական հակադրությունում սոսկ հոգու խնդիր է տեսնում՝ ողջ պատասխանատվությունը դնելով մարդու, անձի վրա՝ ի տարբերություն շատ գրողների (Կաֆկա, Էլիոթ…), ովքեր չարիքի արմատը տեսնում են մարդուց դուրս՝ իրականության մեջ: Օրինակ՝ Թ. Էլիոթի պիեսներից մեկում հերոսն ասում է. «Ոչ թե միտքս է ախտով շաղախված, այլ երկիրը, որտեղ ապրում եմ»[8]: Մինչդեռ «Համառոտ կենսագրության» մեջ Հեսսեն գրում է. «Ես մի բան հստակ եմ հասկանում. դատապարտել ողջ աշխարհը իր խելագարության և անհոգության համար իրավունք չունի մարդկանցից և աստվածներից ոչ մեկը, իսկ ես՝ ամենից շատ: Հնարավոր է, որ հենց իմ մեջ է բնավորվել որևէ անկարգություն, որ ես հակադրության մեջ

[7] **Березина А.** Герман Гессе, Ленинград, 1976, с. 3.
[8] **Eliot T**. The Family Reunion. New York, 1939, p. 31.

եմ մտել ողջ աշխարհի հետ»[9]: Իրականության և մարդու հին կռիվը տեղափոխելով մարդու ներաշխարհ՝ Հեսսեն կեցության ողջ պատասխանատվությունը կապում է մարդու հետ, ինչը էքզիստենցիալ լինելով՝ միաժամանակ շատ հումանիստական գաղափար է: Այստեղ առկա է նաև քրիստոնեական հանրահայտ գաղափարը՝ «Աստծո արքայությունը ձեր մեջ է» (Ղուկաս, 17, 21): Սոցիալական խնդիրների հանդեպ Հեսսեի հետաքրքրությունները մեծ չեն[10]: Կարալաշվիլին այս կապակցությամբ իրավացիորեն գրում է. «Հեսսեի ողջ հետաքրքրությունը կենտրոնանում է առանձին անհատի, նրա հոգևոր կյանքի վրա, ուստիև դրանից դուրս ամեն ինչ, որ անմիջական կապ չունի հոգեբանական ներքին գործընթացների հետ, հնարավորության սահմաններում դուրս է մղվում նրա վեպերից»[11]:

3. Առանձնահատուկ ուշադրությամբ և մանրամասնությամբ նա կերտում է իր հերոսների ***ներաշխարհը՝ իբրև ապաստան***: Սա վերաբերում է հատկապես իրեն, որովհետև մի շարք փաստեր խոսում են այն մասին, որ ամբողջ կյանքում Հեսսեն երազել է ապաստան-անկյան մասին (մեծ քաղաքներից մշտապես խուսափող Հեսսեի կյանքը այլ բան չէր, քան ճգնավորի կյանք): «Ապաստան» էսսեում (1917) այսպիսի տողեր կան. «Նպատակը կրկին ապաստանն է: Բայց ոչ քարանձավ կամ նավ: Ես փնտրում եմ ապաստան և ծարավի եմ ապաստանի իմ իսկ ներսում, փնտրում եմ տարածություն կամ կետեր, ուր չի հասնի աշխարհը, որտեղ տանը մենակ ես եմ»[12]:

4. Հեսսեի փիլիսոփայական վեպերի հիմնահարցերի քննությունը անխուսափելիորեն առնչվում է նաև ***հոգեվերլուծությանը:*** Հերման Հեսսեի և հոգեվերլուծության կապերը չափազանց բարդ են և հակասական: Այդ կապերը դիտարկելու տեսանկյունից անժխտելի հետաքրքրություն է ներկայացնում Արթուր Շնիցլերին Զիգմունդ Ֆրեյդի նամակը: «Ինձ հաճախ է տանջել այն հարցը,- կարդում ենք նամակում,- թե ինչու Ձեզ հետ կապ հաստատելու կամ զրուցելու փորձ այսքան տարիների ընթացքում…չարեցի: Կարծում եմ՝ ես Ձեզանից խուսափել եմ ձեր կրկնորդը լինելու երկյուղից: Ես այն տպավորությունն եմ ստացել, որ Դուք ներքնատեսությամբ (ինտուիցիա), բայց նուրբ ինքնազննումով հասու եք դառնում այն ամենին, ինչը ես մեծ ճիգով հայտնաբերում եմ ուրիշներին զննելով»[13]: Կարծում ենք՝ տվյալ դեպքում խնդիրը դուրս է գալիս Շնիցլեր- Ֆրոյդ առնչությունների սահմաններից և ընդգրկում հարցեր, որոնք վերաբերում են գրողին և հոգեբանին առհասարակ:

---

[9] **Гессе Г**., նշվ. աշխ., էջ 42:

[10] Իհարկե կան նաև հակառակը պնդողներ: Օրինակ, Ֆրից Բյոտգերի կարծիքով Հեսսեի վեպերի աշխարհը սոցիալական խնդիրների աշխարհ է (տե՛ս **Böttger F**. Hermann Hesse. Berlin, 1974):

[11] **Каралашвили Р**., նշվ. աշխ., էջ 48:

[12] **Гессе Г**., նշվ. աշխ., էջ 82:

[13] **Freud S**. Briefe. 1873-1939. Frankfurt am Main, S. Fischer, 1960, S. 249.

Մինչ հոգեբանությունը գիտական փաստերով ապացուցում է մարդկային վարքի այս կամ այն օրենքը, պարզվում է, դրա օրինակները արդեն կան գրականության մեջ: Դա է ապացուցում, օրինակ, Սոֆոկլեսի, Շեքսպիրի, Դոստոևսկու, Էդ. Պոյի ստեղծագործական փորձը: Ըստ էության այս նամակը Ֆրոյդը կարող էր ուղարկել ոչ միայն Շնիցլերին, այլև Հեսսեին, Թ. Մանին, Ջոյսին կամ Պրուստին, և այդ դեպքում նրա բովանդակությունը, երևի, չէր փոխվի: «Արվեստագետը և հոգեվերլուծությունը» էսսեում, ընդհանուր առմամբ կարևորելով հոգեվերլուծության գիտական արժեքը, Հեսսեն գրում է. «Ինձ՝ նոր գիտական հոգեբանության հանդեպ փոքրագույն իսկ հետաքրքրություն չունեցողիս, թվում է, որ Ֆրոյդի, Յունգի, Շտեկելի և մյուսների առանձին ստեղծագործություններում ասված է ինչ-որ նոր և կարևոր բան, ես նրանց կարդացի եռանդով և ընդհանրապես գտնում եմ հոգևոր գործընթացների մասին նրանց հայացքներում հաստատումը իմ բոլոր պատկերացումների, որ ստեղծվել են ֆանտազիայի և սեփական դիտարկումների ճանապարհով»[14]:

Ինչպես բազմաթիվ գրողների, այնպես էլ Հեսսեին հոգեվերլուծությունը օգնեց բյուրեղացնել, որոշակիացնել մարդու, նրա ինքնության մասին պատկերացումները: Հատկանշական է, որ Հեսսեի փիլիսոփայական վեպերը առավել ամբողջականորեն մեկնաբանության տրվում են հենց հոգեվերլուծության գաղափարների, մասնավորապես՝ ինքնության գաղափարի, խորհրդանիշների, մոտիվների կիրառման դեպքում: Այսպես, «Դեմիանը» և «Սիթհարթան» կարող են դիտարկվել իբրև ճանապարհ դեպի ինքնություն, դեպի ներս, «Տափաստանի գայլը» առավելապես ինքնության գիտակցման վեպ է, «Ուխտագնացություն դեպի Արևելքը»՝ ճանապարհ ինքնության մեջ, իսկ «Հուլունքախաղը» ինքնության իրականացում է:

5. Հեսսեի աշխարհայացքի հիմնավոր շերտ է նաև ***Արևելքը***[15]: Արևելքին դիմելը, որ ուշ լուսավորիչներից և հատկապես ռոմանտիկներից հետո Եվրոպայում ձևավորվեց իբրև մշակութային-ստեղծագործական կայուն միտում, Հեսսեի մոտ ունի իր առանձնահատկությունները: «-Հեսսեի ստեղծագործություններում Արևելքին դիմելը ավելի շատ փախուստ էր իրականությունից դեպի ուտոպիա,- իրավացիորեն գրում է Բ. Սանդբերգը,- քան փորձ անսովոր կենտրոնացման և միստիկայի միջոցով գտնելու դեպի ներս տանող ճանապարհը»[16]:

Արևելքի մասին Արևմուտքում գրում էր ազգագրագետը, գրում էր փիլիսոփան, բայց այդ թեման զբաղեցնում էր հատկապես գրողներին և բանաստեղծներին (Ռոլան, Հաքսլի, Հոֆմանսթալ, Էլիոթ, Բրեխտ,

---

[14] «Называть вещи своими именами». М., 1986, с. 400.

[15] Այս մասին մանրամասն տե՛ս **Ա. Առաքելյան,** Հեսսեն և Արևելքը, Եր., 2009:

[16] **Sandberg B**. Der Roman zwischen 1910 und 1930, in: Handbuch des deutschen Romans. Düsseldorf, Bagel, 1983, S. 503.

Դյոբլին, Քիփլինգ…): Անգամ Կաֆկան, որի գրականությունը կարծեք դուրս է գրական շարժման ընդհանուր միտումներից, զերծ չի մնում արևելյան թեմաների գայթակղությունից, օրինակ՝ «Չինական պարսպի կառուցման օրերից» պատմվածքը: Գրողներից ետ չէին մնում նաև փիլիսոփաները: Արևելյան կենսակերպն ու մտածողությունը 20-րդ դարի Եվրոպայի քաղաքական և մշակութային համատեքստում նոր մեկնաբանություն են ստանում Մաքս Շելերի, Ռուդոլֆ Կասների, Թեոդոր Լեսսինգի և այլոց աշխատություններում: 1919 թ. հրապարակվում է Հերման Կայզերլինգի «Փիլիսոփայի օրագիրը», որտեղ, նկատի ունենալով Հեռավոր Արևելք կատարած իր ճամփորդության ճանաչողական մեծ արժեքը, փիլիսոփան գրում է. «Դեպի քեզ տանող ամենակարճ ճանապարհը ընդգրկում է ողջ աշխարհը»: 1918-22 թթ. աղմկոտ հաջողությամբ լույս է տեսնում Օսվալդ Շպենգլերի «Եվրոպայի մայրամուտը» հանրահայտ աշխատությունը, որտեղ Եվրոպայի կործանումը դիտարկված է իբրև քաղաքակրթության հիմնախնդիր, և այդ տեսանկյունից Արևելքին հատկացված է առանձնահատուկ դեր: Այդուամենայնիվ, թվարկածս գրողներից, փիլիսոփաներից և ոչ մեկը այն խորությամբ ու լայնությամբ չապրեց Արևելքը, ինչ Հեսսեն:

Արևելքի թեման Հերման Հեսսեի գրական ժառանգության ուսումնասիրության տեսանկյունից համընդգրկուն է: Ինչպես արդեն նշվեց, արևելյանն այդ ժառանգության մեջ կազմում է ամենակայուն և ամենաազդեցիկ շերտերից մեկը, այսինքն՝ զբաղվել Հեսսեի և Արևելքի առնչություններով, նշանակում է զբաղվել գրողի գրեթե ողջ ժառանգությամբ՝ գեղարվեստական արձակից մինչև քնարերգություն, նամակներից մինչև խոհագրություն, ճանապարհորդական նոթերից մինչև զանազան հոդվածներն ու գրախոսությունները:

Ի՞նչ առանձնահատկություններ են բնորոշ Հեսսե-Արևելք առնչություններին:

Գերմանացի հեսսեագետ Ֆելիքս Լյուտցկենդորֆը Հեսսե և Արևելք առնչություններում տեսնում է զարգացման երկու գործոն՝ ընտանեկան ավանդույթ և ռոմանտիզմ: Սա հեսսեագիտության մեջ ընդունված փաստ է: Չառարկելով այն՝ միաժամանակ հակված ենք այդ առնչություններում տեսնել ևս մեկ՝ երրորդ գործոն, դա հոգեվերլուծությունն է: Մեր կարծիքով, դա նույնպես ակներև իրողություն է, որը դժվար չէ ապացուցել գրողի թե՛ կյանքի և թե՛ գրականության փաստերով:

Այն ամենը, ինչ Հեսսեն ստեղծեց Արևելքի ներշնչանքով, կարելի է, արդարև, անվանել «Նոր արևելաարևմտյան դիվան», որով եվրոպական ոգին մեկ անգամ ևս փորձում է ճանաչել ինքն իրեն: Այս առումով նա անկասկած եվրոպացի է, որի ճակատին դրոշմված է եվրոպական մտքի անխախտ կանոններից մեկը՝ «Ճանաչիր ինքդ քեզ»: Բայց ինչ է նշանակում գրողի համար քննել սեփական հոգին: Լաո Ցզին տալիս է

դրա պատասխանը. «Մարդն ինքն իրենով կարող է ճանաչել մյուսներին»: Հեսսեն Լաո Ցզիի ուսմունքից սովորեց ևս մի կարևոր ճշմարտություն: Դա այն է, որ մարդու կյանքի իմաստը ոչ թե Նպատակն է, այլ Ճանապարհը:

6. Հեսսեի փիլիսոփայական վեպերի համար կարևոր է ևս մեկ առանձնահատկություն: ***Հեսսեի հերոսը անշարժ, ստատիկ կերտվածք չէ, այլ շարժուն, դինամիկ մարդ, ով մշտապես ձգտում է մինչև վերջին իմացություն և վերջին հանգրվան:*** Ֆաուստյան տիպի այդ հերոսների, օրինակ՝ Սիդհարթայի կամ Յոզեֆ Կնեխտի պարագայում, ըստ էության, վերջնական իմացություն կամ հանգրվան չկա: Այս առումով նրանք մի կողմից նմանվելով Ֆաուստին, մյուս կողմից համադրելի են դառնում Սյորեն Կյերկեգորի՝ մարդու ներդաշնակ զարգացման՝ գեղագիտական մարդ, բարոյական մարդ և հոգևոր մարդ եռաստիճան համակարգի պատկերացումների հետ: Օրինակ՝ Սիդհարթան կամ Յոզեֆ Կնեխտը իդեալականորեն համապատասխանում են այդ աստիճաններին: Հասնելով իրենց զարգացման ամենաբարձր աստիճանին, երբ հոգևոր և մարմնավոր իդեալները այլևս նվաճված են, նրանք բառացիորեն ոչնչանում, տարրալուծվում են իրականության մեջ՝ տալով կյանքի, մահվան և հարության առեղծվածային օրինակներ: Վերընթաց այս շարժմանը վիպական կառույցում համապատասխանում են պարզից դեպի բարդ կոմպոզիցիաները: Հեսսեն, ինչպես 20-րդ դարի բազմաթիվ գրողներ, սկսում է պարզ կառույցներից կամ հակադրություններից, ասենք՝ մարդ և գայլ, փիլիսոփայություն և կրոն, կյանք և մշակույթ, բանականություն և բնազդ, սակայն հետագայում այդ պարզ և հանրահայտ կառույցները աստիճանաբար բարդանալով՝ ձեռք են բերում խորհրդավոր և հերմետիկ բնույթ: Այդ կապակցությամբ Ն. Պավլովան իրավացիորեն գրում է. «Պարզությունը նրա (Հեսսեի - Ա. Ա.) փիլիսոփայական վեպերի սկզբունքորեն կարևոր հատկությունն է: Իր էությամբ այն հանելուկային է և իր մեջ թաքցնում է ոչ միայն գեղագիտական, այլև բարոյական իմաստ»[17]:

Գրական ճակատագրով և աշխարհայացքով Հեսսեին ինչ-որ չափով նման է Թոմաս Մանը: Համաեվրոպական հեղինակություն վայելող այս գրողների երկերում շատ բան ընդհանուր է: Լինելով ժամանակակիցներ և ապրելով եվրոպական պատմամշակութային գրեթե միևնույն միջավայրում՝ նրանք անշուշտ ունեցել են աշխարհայացքային, գեղագիտական պատկերացումների ընդհանրություններ: Այդուհանդերձ, նրանք խորապես տարբերվում են միմյանցից: Նրանց ստեղծագործական ճանապարհները, նպատակները և ինքնաճանաչման եղանակները տարբեր են: Լինելով գերմանական ոգու ամենահետաքրքրական դրսևորումը՝ նրանք ստեղծագործություններում առավել ամբողջական և համապարփակ են ներկայացնում 20-րդ դարի եվրոպական

[17] **Павлова Н**. Поэтика немецкого романа. М., 1982, с. 54.

գեղագիտական մտքի կարևորագույն միտումները: Եթե Հերման Հեսսեի համար կարևորագույնը հոգու, անգիտակցականի և ինքնության խնդիրներն են, ապա Թոմաս Մանի ստեղծագործության մեջ համապարփակ մեկնաբանություն է ստանում ժամանակը:

Բանալի բառեր – *ուտոպիա, ուսուցիչ և աշակերտ, հոգու պրոբլեմներ, ներաշխարհին իբրև ապաստան, դիալեկտիկական հերոս, Արևելք և Արևմուտք, բանականություն և բնազդ*

АРА АРАКЕЛЯН – *О некоторых особенностях прозы Германа Гессе.* – В статье рассмотрена проза Германа Гессе, выделены присущие ей проблемы и проанализированы некоторые стороны его поэтики.

Ключевые слова: *утопия, учитель и ученик, духовные проблемы, внутренний мир как прибежище, диалектический герой, Восток и Запад, разум и природа*

ARA ARAKELIAN – *On Some Peculiarities of Herman Hesse's Prose.* – In the present article, the author discusses the problem of Herman Hesse's creative works and aspects of its poetics.

Key words: *utopia teacher and disciple, problems of the soul, inner world as a shelter, dialectical hero, East and West, intellect and instinct*